ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

« 04 » հոկտեմբերի 2012 թ.
թիվ 124

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 8 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1/2.3/8654-12
«04» 10 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
« 10» սեպտեմբերի 2012 թվականի

# Ո ր ո շ ու մ N 74

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքի բնակիչ Ռազմիկ Միքաելյանի 2012 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Արարատյան 1 փողոց, տուն 8 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Ռազմիկ Միքաելյանի (ծնված 1931թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.15 հա հողամասին կից 130 քմ ինքնակամ զբաղեցրած հողամասի և օրինական և ինքնակամ զբաղեցրած հողամասի վրա 1965 թվականին կառուցված բնակելի տան և շենք –շինությունների նկատմամբ:
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Ռազմիկ Միքաելյանին (ծնված 1931թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2012 թվական
հոկտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«11» սեպտեմբերի 2012 թվականի

# Ո ր ո շ ու մ N 75

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Գայ համայնքի բնակիչ Քյարամ Աֆանդու Չոլոյանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Շահումյան փողոց, տուն 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Քյարամ Աֆանդու Չոլոյանի (ծնված 1975թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.15 հա հողամասին կից 220քմ ինքնակամ զբաղեցրած հողամասի և օրինական և ինքնակամ զբաղեցրած հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ին կառուցված բնակելի տան և շենք –շինությունների նկատմամբ:
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Քյարամ Աֆանդու Չոլոյանին (ծնված 1975թ.) սեփականության

իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Լ. Մարկոսյան

2012 թվական
հոկտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 11» սեպտեմբերի 2012 թվականի

# Ո ր ո շ ու մ N 76

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԶԳԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ՍԵԴԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Գայ համայնքի բնակիչ Վազգեն Հակոբյանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Խաղաղության 5 փողոց, տուն 11 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ՝ Վազգեն Վաղարշակի Հակոբյանի (ծնված 1938թ.) և Սեդա Արտավազդի Հակոբյանի (ծնված1937թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.14 հա հողամասին կից 130քմ ինքնակամ զբաղեցրած հողամասի և օրինական և ինքնակամ զբաղեցրած հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ին կառուցված բնակելի տան և շենք-շինու-թյունների նկատմամբ:
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակա-վորում ստացած անձի կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Վազգեն Վաղարշակի Հակոբյանի (ծնված 1938թ.) և Սեդա Արտավազդի Հակոբյանի (ծնված1937թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2012 թվական
հոկտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «25» սեպտեմբերի 2012թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 10

## ԱՆԱՀԻՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի օգնական իրավաբանական գծով Անահիտ Տերտերյանի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումը.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի օգնական իրավաբանական գծով Անահիտ Տերտերյանին 2012 թվականի սեպտեմբերի 25-ից տրամադրել իր հասանելիք արձակուրդը՝ մինչև երեխայի 1 տարին լրանալը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայ համայնքի ղեկավար՝ Ա. Մարկոսյան

2012 թվական
հոկտեմբերի 04-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «28» սեպտեմբերի 2012թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 11

## ՄԱՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «Աշակույր» միացյալ տնօրինության տնօրեն Մանյա Կարապետյանի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի դիմումը

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Գայ համայնքի «Աշակույր» միացյալ տնօրինության տնօրեն Մանյա Կարապետյանին տրամադրել 2012 թվականի ամենամյա արձակուրդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ ( 20 աշխատանքային օր՝ նվազագույն և 4 լրացուցիչ օր):
2. Մանյա Կարապետյանին աշխատանքի մեջ համարել 2012 թվականի նոյեմբերի 2-ից.
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից.

Գայ համայնքի ղեկավար Մարկոսյան

2012 թվական
հոկտեմբերի 04 -ին
գ Գայ